ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 587-Ա **28 նոյեմբերի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ի մասի և 19-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգի» պահանջները.

Որոշում եմ՝

1. **Հաստատել՝**

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի անցկացման կազմկոմիտեների կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի առարկայական հանձնաժողովների կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ **Վանիկ Հարությունյանին՝** մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից տրամադրված տվյալների հիման վրա, համապատասխան համայնքների ղեկավարների հետ քննարկել

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին մասնակցելու երաշխավորված դպրոցականների տեղափոխման հետ կապված խնդիրները և ապահովել նրանց մասնակցությունը:

3. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ **Լուսինե Վարդանյանին՝** Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների 2023-2024 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների տարածքային փուլի անցկացման օրերին համապատասխան դպրոցներում ապահովել բժշկի ներկայությունը՝ առաջին բուժօգնության դեղորայքով:

4. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ **Մարինե Գյարզոյանին՝** սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ **Ռուբիկ Նավոյանին:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ

Հավելված N 1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի

2023 թ. նոյեմբերի 28 ի

N 587-Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Վարդանյան Արաքսյա- Գավառի N 5 հիմնական դպրոցի տնօրեն

Ավագյան Լալա – ԳավառիN 5 հիմնական դպրոցի համակարգչային օպերտոր

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ղազարյան Խանում – Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոցի տնօրեն

Ավետիսյան Աննա - Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոցի համակարգչային օպերտոր

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Խլոյան Սոֆյա – Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան N 2 հիմնական դպրոցի տնօրեն

Սաղաթելյան Նունե - Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան N 2 հիմնական դպրոցի համակարգչային օպերտոր

ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Գրիգորյան Կարինե – Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցի տնօրեն

Քեշիշյան Հասմիկ - Ճամբարակի Մ. Քոչարյանի անվան N 2 հիմնական դպրոցի համակարգչային օպերտոր

ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հովհաննիսյան Լուսինե – Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոցի տնօրեն

Սարգսյան Սարմինե - Սևանի Վ. Կարապետյանի անվան N 3 հիմնական դպրոցի համակարգչային օպերտոր

28.11.2023

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հարգանքներով՝ Գագիկ Հարությունյան KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ